

ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏԿԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՇՍՈՒՐՄՆԵՐԻ ՀԱՄԱՂՐՄԱՆ ՆԱԽԱՂԻՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԱՅԼԸՆՏՐԱԼԸ Զետազոտական կենտրոնի ղեկավար
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բանալի բառեր. Զարգացման բանկ, հիմնադրամ, ռեսուրսներ, Մփյուռք,
տնտեսություն, կապիտալի արտահոսք

«Համահայկական բանկի» գործունեությունը Հայաստանում աննախադեպ օրինակ է ոչ միայն այն իրողության, թե ինչպես կարող է վնասով աշխատող բանկը մի քանի տարի շարունակել գոյությունը պետության հաշվին, այլև այն փաստի, թե ինչպես չի կարելի աշխատել: Այս կառույցը ստեղծվել է մեր կողմից ներկայացված առաջարկով, որը ներկայացվել է 1991թ. փետրվարին Լոս-Անջելեսում կայացած առաջին համահայկական գիտաժողովին: Գործունեությունը սկսել է որպես զարգացման բանկ և որպես հիմնական նպատակ դիտարկվում է Հայաստանի և հայության ֆինանսական ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործում՝ ի շահ Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և ազգաբնակչության կյանքի որակի բարելավման:

Հիմանդրումից ի վեր ընկած ժամանակահատվածում «Համահայկական բանկը» միայն մասնակի է կատարեց իր առջև դրած խնդիրները, իսկ նպատակների իրագործման և նախաձեռնողական գործունեության տեսանկյունից դարձել է խիստ անարդյունավետ գործող կառույց:

Մեր համոզմամբ, «Համահայկական բանկի» **հիմնական նպատակները պետք է լինեն.**

- հանրային ներդրումների ներգրավումն ու դրանց արդյունավետության բարձրացումը;

- արտադրական ենթակառուցվածքների և վերամշակող արդյունաբերության զարգացումը;

- տնտեսության մեջ ներքին և արտաքին ներդրումների ներգրավմանն աջակցությունը:

Կարևոր է սահմանել զարգացման նպատակներին համապատասխան ֆինանսական գործիքների և մեխանիզմների օգնությամբ «Համահայկական բանկի» զարգացման առաջնայնությունները, որոնք, մեր համոզմամբ, կարող են հանգել գործունեության **հետևյալ սկզբունքները.**

✓ իրատեսականության սկզբունքը՝ նախատեսվող թիրախների և ցուցանիշների համապատասխանությունը;

✓ հետևողականության սկզբունքը՝ նպատակների աստիճանական իրագործում և խնդիրների լուծում;

✓ արդյունավետության սկզբունքը՝ ժամանակին և անհրաժեշտ որակով ռազմավարական նպատակների իրագործում:

«Համահայկական բանկի» ընթացիկ գործունեության և հեռանկարային ռազմավարության հիմնահարցերի արդյունավետ հանգուցալուծումը պահանջում է նաև ռազմավարական պլանավորման և կորպորատիվ կառավարման ժամանակակից մեթոդների միջազգային ուսանելի փորձի ուսումնասիրություն և տեղայնացում՝ հաշվի առնելով **Հայաստանի ազգային տնտեսության կառուցվածքային բարեփոխումների ներկա փուլի առանձնահատկությունները:**

Ակնհայտ է, որ զարգացման բանկը ստեղծված է իրականացնելու սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված այնպիսի երկարաժամկետ ծրագրերի ֆինանսավորում, որը չի կարող ամբողջությամբ իրականացվել մասնավոր բիզնեսի կողմից: «Համահայկական բանկի» ծրագրերը պետք է միտված լինեն **աջակցելու Կառավարության կողմից ձևակերպված խնդիրների լուծմանը՝** նպաստել տնտեսական աճին, ՀՆԱ-ի դիվերսիֆիկացմանը, տնտեսության արդիականացմանն ու սոցիալական խնդիրների լուծմանը: Հետևաբար, որպես հիմնական նպատակներ կարող են դիտարկվել հետևյալ **խնդիրները.**

- աջակցություն ներդրումային նախագծերին՝ երկարաժամկետ վարկերով;
- աջակցություն տնտեսության համար ներքին և արտաքին ներդրումների ներգրավմանը;
- գերակա ոլորտների զարգացման խոշոր նախագծերի գնահատում և մշակում;
- արտահանմանն ուղղված արտադրությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ վարկավորում;
- ձգնաժամային երևույթների բացասական ազդեցության կրճատում՝ տնտեսության վերականգնմանն ուղղված վարկային ռեսուրսների միջոցով:

Հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի և հայության մրցակցային առավելությունները և զարգացման առանձնահատկությունները, որպես «Համահայկական բանկի» ֆինանսական ռեսուրսների լրացուցիչ աղբյուր, առաջարկվում է քննարկել **տնտեսության աշխուժացման ֆինանսական նոր գործիքների ներգրավման հնարավորությունները:**

Այսպիսով, «Համահայկական բանկը», որպես զարգացմանն աջակցող կառույց, պետք է իրականացնի համարժեք գործառնություններ, որոնք ուղղված են առավելագույնս մեծացնել ազգային տնտեսությունում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական էֆեկտը: Գերակա ոլորտների զարգացման ծրագրերի համար «Համահայկական բանկը» կարող է առաջարկել բարենպաստ ֆինանսավորման պայմաններ, հաշվի առնելով նաև Կառավարության էական աջակցությունը:

«Համահայկական բանկի» գործունեությունն ապագայում կարող է և պետք է հաշվի առնի աշխարհում զարգացման բանկերի հաջող գործունեության ուսանելի փորձը, դրանց ցուցանիշները և հեղինակավոր կառույցների կողմից շնորհված վարկանիշները:

«Համահայկական բանկը» կարող է լրացնել տնտեսությունում առկա երկարաժամկետ ներդրումային ռեսուրսների բացը և հնարավորություն ընձեռել իրականացնել ծրագրեր, որոնք բնութագրվում են բարձր ռիսկերով, ծախսածածկման երկար ժամանակահատվածներով, ցածր եկամուտով և մեկնարկային ծավալուն ներդրումների անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, «Համահայկական բանկը» չպետք է մրցակցի առևտրային բանկերի կամ այլ ֆինանսական կառույցների հետ և որպես կառավարության կողմից հիմնադրած կառույց, կարող է ազատվել մակրոպրոդեյնցիալ կարգավորման այն կանոններից, որոնք կիրառելի են առևտրային բանկերի համար:

Վերջապես, կարևոր է հստակեցնել «Համահայկական բանկի» ռազմավարությունը, դրա գործունեության հանդեպ վերահսկողության, մշտադիտարկման մեխանիզմն ու հաշվետվողականությունը, ավելացնել ծրագրերի մշակման, դրանց ներգրավման նախահարձակ բնույթը, ներդնել հավասարակշռված Scorecard արդյունավետությունը աշխատակիցների և ղեկավարության համար և նպատակներին հասնելու համար մշակել աշխատողների մոտիվացիայի հստակ սկզբունքներ:

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Ջարգացմանը միտված կառույցների ռեսուրսների համադրման նախադրյալները Հայաստանում

Բանալի բառեր. Ջարգացման բանկ, հիմնադրամ, ռեսուրսներ, Սփյուռք, տնտեսություն, կապիտալի արտահոսք

«Համահայկական բանկի» գործունեությունը Հայաստանում աննախադեպ օ-րինակ է ոչ միայն այն իրողության, թե ինչպես կարող է վնասով աշխատող բանկը մի քանի տարի շարունակել գոյությունը պետության հաշվին, այլև այն փաստի, թե ինչպես չի կարելի աշխատել:: Այս կառույցը ստեղծվել է մեր կողմից ներկայացված առաջարկով, որը ներկայացվել է 1991թ. փետրվարին Լոս-Անջելեսում կայացած առաջին համահայկական գիտաժողովին: Գործունեությունը սկսել է որպես զարգացման բանկ և որպես հիմնական նպատակ դիտարկվում է Հայաստանի և հայության ֆինանսական ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործում՝ ի շահ Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և ազգաբնակչության կյանքի որակի բարելավման:

Татул МАНАСЕРЯН

Предпосылки координации целевых ресурсов развития в Армении

Ключевые слова: Банк развития, фонд, ресурсы, Диаспора, экономика, отток капитала

Деятельность Всеармянского банка в Армении является беспрецедентным примером не только того, как банк, работающий с убытками, может продолжать существование в течение нескольких лет за счет государства, но и свидетельство того, как нельзя работать. Эта структура была создана по нашему предложению, которое было представлено на первой общеармянской конференции в Лос-Анджелесе в феврале 1991 года. Его деятельность началась в качестве банка развития и главная цель - эффективно использовать финансовые ресурсы всего армянства в целях повышения конкурентоспособности экономики Армении и улучшения качества жизни населения.

Tatul MANASERYAN

Prerequisites for coordinating the development target in Armenia

Key words: development bank, fund, resources, Diaspora, economy, outflow of capital

The activity of the Pan-Armenian Bank in Armenia is an unprecedented example not only of how a bank working with losses can continue to exist for several years at the expense of the state, but also evidence of how it is impossible to work. This structure was created on our proposal, which was presented at the first pan-Armenian conference in Los Angeles in February 1991. Its activities began as a development bank and the main goal is to effectively use the financial resources of all Armenians in order to increase the competitiveness of the Armenian economy and improve the quality of life of the population.